ՏԱՐԵԳԻՐՔ

2022

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՐԱՄԱՆԱՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ
ՓՈԽԱՆՈՐԴ ՏԵՐ ՆԱՒԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԵԱՆԻ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

1999թ. դեկտեմբերի 1-ից թեմի առաջնորդական փոխանորդն է Գերաշնորհ Տեր Նավասարդ Արքեպիսկոպոս Կճոյանը: Ներկայումս Արարատյան Հայրապետական թեմն ընդգրկում է Երևան քաղաքը: 2022 թվականի դրությամբ Երևանում գործում է 18 եկեղեցի, 8 մատուռ: Հոգևոր ծառայություն է մատուցում 34 քահանա:

ԹԵՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

- Թեմական խորհուրդ
- Ծխական խորհուրդներ
- Ծնողազուրկ երեխաների բարեգործական գրասենյակ
- Գրադարան
- Տիկնանց միություններ
- Երիտասարդաց միություններ
- Կիրակնօրյա դպրոցներ
- Խուլերի համայնք
- Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
- Հայ Եկեղեցասեր երիտասարդաց միություն կրթադաստիարակչական կենտրոն
- Տեղեկատվական բաժին՝ էլեկտրոնային քարոզչության գրասենյակով, www.qahana.am կայքով, սոցիալական ցանցերում գործող էջերով:
- Թեմ TV/Tem TV առցանաց ալիք
- «Շողակն Արարատյան» ամսաթերթ
- «Շողակաթ» հոգևոր գրախանութ

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Տեր Պետրոս ավգ. քհն. Մալյան (հոգևոր հովիվ)
Տեր Շահե քհն. Հայրապետյան
Տեր Անուշավան քհն. Կոշեցյան

ՁՈՐԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Տեր Գրիգոր քհն. Գրիգորյան (հոգևոր հովիվ)
Տեր Հայկազուն քհն. Մկրտչյան
Տեր Վահան քհն. Առաքելյան

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ (Կոնդ)

Տեր Տիրայր ավգ. քհն. Սահրադյան (հոգևոր հովիվ)
Տեր Ավետիս ավգ. քհն. Դանիելյան
Տեր Դանիել քհն. Բաղումյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ (Նորագավիթ)

Տեր Ղուկաս քհն. Բալայան (հոգևոր հովիվ)
Տեր Մյուռոն ավգ. քհն. Ադամյան

ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Մալաթիա)

Տեր Տիրան ավգ. քհն. Առուշանյան (հոգևոր հովիվ)
Տեր Մկրտիչ ավգ. քհն. Թովմասյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Նորք-Մարաշ)

Տեր Զաքարիա քհն. Ավետիսյան (հոգևոր հովիվ)
Տեր Թովմա քհն. Անդրեասյան
Տեր Զգոն քհն. Աբրահամյան

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍ

ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Տեր Զենոն քհն. Բարսեղյան (հոգևոր հովիվ)
Տեր Արսեն քհն. Սարոյան

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ (Քանաքեռ)

Տեր Շմավոն քհն. Ղևոնդյան (հոգևոր հովիվ)
Տեր Գաբրիել քհն. Պետրոսյան

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ (Նոր Նորք)

Տեր Նորայր ավգ. քհն Բաղդասարյան (հոգևոր հովիվ)
Տեր Վարդան ավգ. քհն. Մկրտչյան
Տեր Կարապետ քհն. Կարապետյան

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Դավթաշեն)

Տեր Խորեն քհն. Մարուքյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ (Ներքին Չարբախ)

Տեր Հրաչյա քհն. Գյոզալյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ (ՀԱԹ)

Տեր Վարդան քհն. Գափոյան (հոգևոր հովիվ)
Տեր Արարատ քհն. Օրդոյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Ավան)

Տեր Հարություն քհն. Ավագյան (հոգևոր հովիվ)

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍ

ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ (Արաբկիր)

Տեր Պարթև քհն. Մուրադյան(հոգևոր հովիվ)
Տեր Բաբկեն քհն. Հայրապետյան

ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Տեր Զգոն քհն Աբրահամյան (հոգևոր հովիվ)

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Նուբարաշեն)

Տեր Բարդուղիմեոս քհն. Հակոբյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Նոր Նորքի 1-ին զանգված)

Տեր Աշոտ քհն. Սաֆարյան (հոգևոր հովիվ)

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Եռաբլուր պանթեոն)

Տեր Զաքարիա քհն. Անանյան (հոգևոր հովիվ)

ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑԻ (Վերին Շենգավիթ)

Տեր Զարեհ քհն. Աշուրյան (հոգևոր հովիվ)

ԹԵՄՈՒՄ ՍՊԱՍԱՎՈՐՈՂ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐ

- Համբարձումյան Գևորգ Արշավիրի
- Սարգսյան Ալեքսանդր Սարգսի
- Մարդիգյան Թոմաս Անտրանիգի
- Ներսեսյան Հովհաննես Ալեքսանի
- Շահմիրզայան Վահե Հայրապետի
- Սահրադյան Սուրեն Արշակի
- Սարգսյան Հրանտ Աշոտի
- Պողոսյան Սամվել Արթուրի
- Գևորգյան Արթուր Արսենի
- Սիմոնյան Ավետիս Հակոբի

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

Հունվարի 5-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ, առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում մատուցվեց Սուրբ Ծննդյան Ճրագալույցի Սուրբ և Անմահ Պատարագ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

Հունվարի 6-ին Քրիստոսի Սուրբ Ծննդյան ու Աստվածահայտնության տոնի առթիվ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը տոնական Ս. Պատարագ մատուցեց առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում: Սրբազան Հորը որպես ընթերականներ սպասավորում էին Տ. Շահե քահանա Հայրապետյանը և Տ. Հովհան քահանա Հովհաննիսյանը:

Ս. Պատարագի ավարտին Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը Ջրօրհնեքի կարգ կատարեց

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Փետրվարի 12-ին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնեց Սուրբ Սարգիս զորավարի, նրա Մարտիրոս որդու և 14 զինակիցների տոնը: Տոնի առթիվ առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցի բերվեց Սուրբ Սարգսի աջը:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանից առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցի բերվեց 17-րդ դարում Սուրբ Սարգիս եկեղեցում ընդօրինակված Ավետարանը:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Փետրվարի 12-ին Արարատյան Հայ-
ռապետական թեմի
Առաջնորդանիստ Սարգիս
եկեղեցում Ս. Պատարագ
մատուցվեց

Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Ադամյանի հանդիսապետությամբ: Պատարագիչը ՀՀ Զինված ուժերի գնդերեց արժանապատիվ Տ. Վարազդատ քահանա Նաջարյանն էր:

Ս. Պատարագի ավարտին Սիոն Սրբազանը սրբի մասունքով օրհնեց երիտասարդներին ու զինվորներին:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ և Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Ադամյանի հանդիսապետությամբ թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից զինվորների պարգևատրման արարողություն:

Նավասարդ Սրբազանի նախաձեռնությամբ Սուրբ Սարգսի տոնի առթիվ Հայոց բանակի լավագույն զինվորների պարգեւատրությունը իրականացվում է 7-րդ անգամ: Արարատյան Հայրապետական թեմի կողմից 20 ժամկետային զինծառայողների շնորհվեց տոնի խորհրդանշական խաչեր, հուշանվերներ և 4 մլն դրամի դրամական պարգև:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

փետրվարի 12-ին Հայաստանի նկարիչների միությունում բացվեց «Սուրբ Սարգիս» խորագրով ցուցահանդես-մրցույթը, որն արդեն թվով ութերորդն է:

Արարողությանը ներկա էր Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Սիոն արքեպիսկոպոս Ադամյանը: Նա ներկաներին ու երիտասարդներին փոխանցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ողջույնները:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

«ԻՄ ԳԱՂՏՆԻ ԳՐՔԱՍԵՐ»

Արդեն վեցերորդ անգամ Սուրբ Սարգսի տոնին Արարատյան Հայրապետական թեմի ու «Բուկինիստ» գրախանութների ցանցի համագործակցությամբ իրականացվեց «Իմ գաղտնի Գրքասեր. սիրո խոստովանություն գրքով» ծրագիրը:

Արարողության մեկնարկին ներկաներին ողջունեց ու Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությունները փոխանցեց Նորք- Մարաշի Սուրբ Աստվածածին եկեղեցու խորհրդակատար Տեր Թովմա քահանա Անդրեասյանը:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

«ՄԵՐ ՄԵԾԵՐԻ ՍԵՐԸ»

Փետրվարի 11-ին Հովհաննես Թումանյանի թանգարանում ամփոփվեց «Մեր մեծերի սերը» խորագրով խաղը, որն անց էր կացվում առաջին անգամ: Խաղը նախաձեռնել են Հովհաննես Թումանյանի թանգարանը, ԵՊՀ Ուսխորհուրդը՝ Արարատյան Հայրապետական թեմի աջակցությամբ:

Խաղի ամփոփման գեղարվեստական միջոցառումը սկսվեց Արարատյան Հայրապետական թեմի Արաբկիրի Սուրբ Խաչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Պարթև քահանա Մուրադյանի օրհնությամբ, այնուհետև երիտասարդներին փոխանցեց թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությունը:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

ՍԻՐՈ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ. ՀՈԳԵՒՈՐ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Սուրբ Սարգսի տոնի առթիվ փետրվարի 12-ին Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի «Քարավան» ակումբում տեղի ունեցավ բաց դասախոսություն՝ «Սիրո գերազանցությունը. հոգևոր-հոգեբանական դիտարկումներ» խորագրով: Դասախոսությունը վարեց «Դիալոգ» ՀԿ-ի հոգեբան Արմինե Վահանյանը: Միջոցառումն Արարատյան հայրապետական թեմի Նոր Նորքի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Աշոտ քահանա Սաֆարյանի գլխավորությամբ մեկնարկեց Տերունական աղոթքով: Ապա Տեր հայրը ներկայացրեց օրվա խորհուրդը՝ պատմելով Սուրբ Սարգսի ու նրա որդի Մարտիրոսի քրիստոնեական սխրանքի մասին:

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Փետրվարի 13-ին ԱՀԹ բոլոր եկեղեցիներում տեղի ունեցավ Երեկոյան ժամերգություն, կատարվեց Տյառնընդառաջի նախատոնակը և տարվա առաջին Անդաստանի արարողությունը, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերը: Թեմի եկեղեցիների բակերում վառվեց ավանդական խարույկը:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Փետրվարի 27-ին Արարատյան Հայրապետական թեմի Կաթողիկե Ս. Աստվածածին եւ Ս. Աննա եկեղեցիների բակում իրականացվեց Բուն Բարեկենդանի տոնախմբություն:

Հոգեւոր հովիվ Տեր Զենոն քահանա Բարսեղյանը մասնակիցներին շնորհավորեց Բարեկենդանի տոնի առթիվ ու մաղթեց, որ խաղաղությամբ անցնեն մեծ պահոց շրջանը:

Տոնախմբությունը եկեղեցու բակում կազմակերպվել էր «Գութան» ազգային երգի -պարի փառատոնի, «Հայ Ասպետ» դպրոցի, «Ազգային ինքնություն և ընտրանի» նախաձեռնության կողմից: Տոնին ավանդական երգն ու պարը, ազգագրական սովորություններն ու խաղերը կազմակերպում էր «Վարք հայոց» երգի-պարի ազգագրական խումբը (գեղ. ղեկավար՝ Սարգիս Փարամուզյան):

ԾԱՂԿԱԶԱՐԴ

ՆԱՎԱՍԱՐԴ ՍՐԲԱԶԱՆՆ ՕՐՀՆԵՑ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Ապրիլի 10-ին Ծաղկազարդի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ մուտքը Երուսաղեմ տոնի առթիվ Արարատյան Հայրապետական թեմի բոլոր եկեղեցիներում մատուցվեց տոնական Ս. Պատարագ: Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում Ս. Պատարագը մատուցվեց թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ: Պատարագիչը առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիվ արժանապատիվ Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանն էր:

Հավարտ Ս. Պատարագի Նավասարդ Սրբազանը կատարեց մանուկների օրհնության կարգ:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

ԱՀԹ-ՈՒՄ ՆՇՎԵՑ ԾԱՂԿԱԶԱՐԴԸ

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ թեմի եկեղեցիներում Ս. Պատարագի ավարտին կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ:

ԱՀԹ մի շարք եկեղեցիների բակերում Սուրբ Պատարագից և Մանուկների օրհնության կարգից հետո տեղի ունեցավ կավճանկարչություն:

Տոնական միջոցառումներ կազմակերպվեցին նաև թեմի Զորավոր Սուրբ Աստվածածին, Նորագավթի Սուրբ Գևորգ, Արաբկիրի Սուրբ Խաչ, Ներքին Չարբախի Սուրբ Խաչ, Դավթաշենի Սրբոց Նահատակաց, Սուրբ Երրորդություն եկեղեցիներում:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Ապրիլի 9-ին, Արարատյան Հայրապետական թեմում Էրեբունի համայնքում վերաբացվեց կիրակնօրյա դպրոց:

ԱՀԹ Էրեբունի համայնքի «Ոսկե հատիկ» վերաբացված Կիրակնօրյա դպրոցն ընդլայնեց իր գործունեության շրջանակը՝ հնարավորություն տալով երեխաներին մասնակցելու անգլերենի, ռուսերենի, դասապատրաստման, նկարչության, ուլունքագործության, տիկնիկագործության, կար ու ձևի, երգեցողության խմբակների: Կգործեն նաև առցանց խմբակներ:

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

ԱՎԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ

Ավագ Երեքշաբթի ավետարանական ընթերցանությամբ հիշատակվում է «Տասը կույսերի» առակը (Մատթ. 25:1-13), որը հորդորում է նմանվել իմաստուն կույսերին և պատրաստ լինել Տիրոջ հրաշափառ Գալստյանը:

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Ավագ հինգշաբթին հիշատակն է առաքյալների հետ Հիսուսի անցկացրած Վերջին ընթրիքի, որի ժամանակ Տերը հացն ու գինին օրհնելով՝ հաստատեց Հաղորդության խորհուրդը՝ ասելով. «Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը», «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար»:

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ

Ավագ ուրբաթը խորհրդանշում է արարչագործության վեցերորդ օրը, երբ Աստված հողից արարեց Ադամին Իր պատկերով ու նմանությամբ, իսկ հետո նրա կողից ստեղծեց Եվային և նրանց դրեց դրախտում: Ինչպես Ադամի կողից ստեղծվեց նրա կողակիցը՝ Եվան, այնպես էլ Տիրոջ կողից հաստատվեց Նրա հարսը՝ Եկեղեցին:

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ

ՃՐԱԳԱԼՈՒՅՑԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Ապրիլի 16-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում մատուցվեց Սուրբ Հարության Ճրագալույցի Ս. Պատարագ: Պատարագիչը Տ. Շահե քահանա Հայրապետյանն էր:

ՃՐԱԳԱԼՈՒՅՑ

ԿԱՆԹԵՂՆԵՐՈՎ ԵՐԹ

Սուրբ Հարության Ճրագալույցի Սուրբ Պատարագի ավարտին Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդներն արդեն ութերորդ անգամ իրականացրին «Հարության Ավետիս» խորագրով կանթեղներով երթը: Թեմի երիտասարդները, ԱՀԹ երիտասարդաց միությունների համակարգող Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանի գլխավորությամբ, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցուց սկսեցին երթը:

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Ապրիլի 17-ին Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առթիվ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում հանդիսավոր Ս. Պատարագը մատուցեց թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: Որպես առընթերականեր Սրբազան հորը սպասավորում էին Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանն ու Տ. Շահե քահանա Հայրապետյանը:

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ՝ Ս. ԱՆՆԱ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԲԱԿՈՒՄ

Ապրիլի 17-ին՝ Սուրբ Հարության տոնին, Սուրբ Աննա և Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցիների բակում մեծ տոնախմբություն էր: Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ եկեղեցիների բակում իրականացվեցին մի շարք միջոցառումներ:

Եկեղեցիների բակում Հայաստանում առաջին անգամ տեղի ունեցավ «Զատկական փառատոն»՝ Սրբազան հոր օրհնությամբ, «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ և ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: Փառատոնին աջակցում են նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Ֆորմիկա Արտ ընկերությունը և ՀԵՀԵՄ գրասենյակը:

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆՆ ԱՀԹ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Ապրիլի 17-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը՝ Սուրբ Զատիկը: Տոնն Արարատյան Հայրապետական թեմում ևս նշվեց մեծ շուքով: Թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ՝ իրականացվեցին մի շարք միջոցառումներ:

Արաբկիրի Սուրբ Խաչ եկեղեցի

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնին տեղի ունեցավ հիշարժան միջոցառում և ավանդական հյուրասիրություն: Զատկական միջոցառման ընթացքում ելույթ ունեցան «Տարոնցիներ» ազգագրական երգի-պարի համույթը, Արաբկիրի և Նորքի հայորդաց տան սաները:

Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցի

Մեծ տոնախմբություն էր կազմակերպվել՝ համայնքի կրթական հաստատությունների մասնակցությամբ: Միջոցառմանը ներկա էին Նոր Նորք վարչական շրջանի պաշտոնեությունը, ուսումնական հաստատությունների ղեկավարներ, մանկավարժներ և բնակիչներ:

Միջոցառումը սկսվեց միասնական Տերունական աղոթքով, հնչեցին ազգային երգեր ու պարեր՝ Մշակույթի տան սաների կատարմամբ: Միջոցառման ընթացքում կատարվեց նաև հավկիթների օրհնության կարգ, որոնք բաժանվեցին մասնակիցներին: Զատկական հյուրասիրությունն ու խաղերն էլ ավելի ամբողջական դարձրին տոնը:

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆՆ ԱՀԹ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Մարաշի Սուրբ Աստվածածին եկեղեցի

Տեղի ունեցավ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնին նվիրված ժողովրդական տոնախմբություն՝ համերգային ծրագրով: Կազմակերպվեց տոնական հյուրասիրություն՝ զատկական ուտեստների բազմազանությամբ և առատությամբ:

Նորագավթի Սուրբ Գևորգ եկեղեցի

Տոնական Սուրբ Պատարագից հետո ներկաները հնարավորություն ունեցան եկեղեցու բակում ունկնդրելու «Տարոնցիներ» ազգագրական երգ ու պարի համույթի կատարումները, մասնակիցը դառնալու մեծ տոնախմբությանը, միասնական պարեր պարելու:

Ներքին Չարբախի Սուրբ Խաչ եկեղեցի

Տոնական Սուրբ Պատարագից հետո եկեղեցու բակում մեկնարկեց միջոցառում՝ համայնքապետարանի նախաձեռնությամբ: Ելույթ ունեցան համայնքի անդամներ՝ ներկայացնելով ազգային երաժշտությունն ու ազգային պարերը: Նրանց կողքին ելույթ ունեցան նաև հայտնի երգիչներ Լեյլա Սարիբեկյանը, Ռուբեն Սասունցին՝ հանդես գալով ազգագրական, հայրենասիրական կատարումներով:

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆՆ ԱՀԹ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Մալաթիայի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի

Տեր Տիրան ավագ քահանա Առուշանյանը Հարության տոնի առթիվ այցելեց «Ջերմիկ անկյուն» տուն-ինտերնատ:

Արդեն հարազատ դարձած տուն-ինտերնատում անհամբեր սպասում էին եկեղեցու համայնքի անդամներին, ովքեր եկել էին՝ Հարության ավետիսը փոխանցելու՝ իրենց հետ բերելով Հարության և նոր կյանքի խորհրդանիշ կարմիր զատկական ձու, քաղցրավենիք և նվերներ:

Դավթաշենի Սրբոց Նահատակաց եկեղեցի

Հարության ավետիսը միմյանց փոխանցելուց հետո եկեղեցու բակում մեկնարկեց տոնական միջոցառում: Ազգագրական երգ ու պար, գեղեցիկ տոնական հյուրասիրություն, ջերմ ու բարի մթնոլորտ:

Ավանի Սուրբ Աստվածածին եկեղեցի

Սուրբ Պատարագից հետո տեղի ունեցավ տոնական համերգ, որն իրականացվել էր համայնքապետարանի նախաձեռնությամբ և համայնքի մշակույթի տան սաների մասնակցությամբ:

Քանաքեռի Սուրբ Հակոբ եկեղեց եկեղեցի

Սուրբ Պատարագից հետո կազմակերպվել էր տոնական համերգ՝ համայնքապետարանի նախաձեռնությամբ: Համերգին հաջորդեց զատկական ուտեստների տոնական հյուրասիրություն:

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆ

ՏՆՕՐՀՆԵՔԻ ԿԱՐԳ՝ ՄԱՐԳԱՐՅԱՆ ԾՆՆԴԱՏԱՆԸ

Ապրիլի 22-ին, Սուրբ Աննա և Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցիների հոգևոր հովիվ Տեր Զենոն քահանա Բարսեղյանը Սուրբ Հարության տոնի առթիվ այցելեց Մարգարյան ծննդատուն: Տեր Հայրը կատարեց Տնօրհնեքի կարգ, օրհնեց հացը, աղը և ջուրը և Հարության ավետիսը փոխանցեց ներկաներին:

ՆՈՐ ՆՈՐՔԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ ԲԱՑՎԵՑ

Ապրիլի 24-ին, Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցում բացվեց Կիրակնօրյա դպրոց: Դպրոցի հանդիսավոր բացումը տրվեց եկեղեցու բակում: Եկեղեցու Կիրակնօրյա դպրոցն այժմ ունի 26 սան: Նրանց թիվը, սակայն, վերջնական չէ և աճում է:

«ԾԱՂԿԱՀԱՎԱՔ» ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Ապրիլի 26-ին Ծիծեռնակաբերդը դարձյալ մարդաշատ էր: Տարիներ շարունակ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի «Ծաղկահավաք» նախաձեռնությամբ ապրիլի 24-ին հուշահամալիր բերված ծաղիկները չեն թափվում որպես աղբ, այլ հավաքվում և մշակվում են:

ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ այսօր ԱՀԹ Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Պետրոս ավագ քահանա Մայլանը և ԱՀԹ «Ծաղկազարդ» համախումբը (գեղ. ղեկավար և խմբավար՝ Լիլիթ Գրիգորյան) մասնակցեցին նախաձեռնությանը: Աշխատանքը սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո Տեր հայրն իր օրհնության խոսքն ուղղեց ներկաներին: Այնուհետև մասնակիցները սկսեցին իրենց աշխատանքները՝ «Ծաղկազարդ» համույթի հոգևոր երգերի ուղեկցությամբ:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆ

Մայիսի 26-ին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը: Արարատյան Հայրապետական թեմի Երիտասարդաց միությունների նախաձեռնությամբ և թեմի երիտասարդական կառույցների համակարգող Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանի գլխավորությամբ Երևանի՝ Թումանյանի այգում կազմակերպվել էր տոնական միջոցառում՝ հագեցած ժողովրդական սովորույթներով: Միջոցառմանը մասնակցում էր նաև Արարատյան Հայրապետական թեմի «Վարք հայոց» երգի-պարի խումբը:

ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՏՈՒՌԸ

Հունիսի 17-ին, Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ Վիրապից ելքի տոնին ընդառաջ, տեղի ունեցավ Նոր Նորքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնում գործող մատուռի վերաբացումը:

Նոր Նորքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Աշոտ քահանա Սաֆարյանը մատուռում կատարեց Երեկոյան ժամերգություն, ապա՝ տոնի նախատոնակը, իսկ հետո կատարեց Անդաստանի կարգ՝ օրհնելով աշխարհի չորս ծագերը:

«ՀԵՀԵՄ-Ը ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԿԱՄՈՒՐՋ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդական Միավորման (ՀԵՀԵՄ) հոգևոր առաջնորդ Գերաշնորհ Տեր Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի առաջնորդությամբ հուլիսի 6-10-ը մայր հայրենիքում անցկացվեց «ՀԵՀԵՄ-ը Հայաստան-Սփյուռք կամուրջ» խորագրով համահայկական ուխտագնացությունը:

Ուխտագնացությանը մասնակցում էին նաև 11 երիտասարդներ՝ ԱՀԹ առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ, ԱՀԹ Երիտասարդաց միությունների համակարգող Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանի գլխավորությամբ

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՆԱԽԱՏՈՆԱԿ

Հուլիսի 23-ի երեկոյան, ԱՀԹ Երիտասարդաց միությունները մեծ շուքով նշեցին նաև Վարդավառի նախատոնակը: Ներկաները, ԱՀԹ Երիտասարդաց միությունների համակարգող Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանի գլխավորությամբ, քայլեցին Սուրբ Սարգիս եկեղեցուց դեպի մոտակա Մանկական այգին, ուր արդեն սկսվեց տոնախմբությունը, որ հագեցած էր ազգային երգ ու պարով, խաղերով:

«ՏԻՐԱՄՈՐ ՄԱՆԿՈՒՆՔ» ՀՈԳԵՒՈՐ ԲԱԿԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ

«Տիրամոր Մանկունք» ճամբարը նախ և առաջ կրում է հոգևոր բնույթ և նպատակ ունի հայորդիների մեջ սեր և նվիրում սերմանել քրիստոնեության, Սուրբ Գրքի, Եկեղեցու հանդեպ:

Ճամբարին մասնակցել են 80 երեխաներ՝ 7-15 տարեկան, Նոր Նորք վարչական շրջանից:

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆ

«Օգոստոսի 14-ին Ս. Աստվածածնի վերափոխման տոնի առթիվ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը Սուրբ Պատարագ մատուցեց թեմի Սուրբ Աննա եկեղեցում: Որպես առընթերական Սրբազան հորը սպասավորում էին Տեր Պարթեւ քահանա Մուրադյանն ու Տեր Վարազդատ քահանա Նաջարյանը:

ԽԱՉՎԵՐԱՑ

Սեպտեմբերի 11-ին, Խաչվերացի տոնի առթիվ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ Ս. Պատարագ մատուցվեց թեմի Արաբկիրի Ս. Խաչ եկեղեցում: Պատարագիչը Մերձբալթյան երկրների հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վարդան եպիսկոպոս Նավասարդյանն էր: Որպես առընթերակա Սրբազան հորը սպասավորում էր Տեր Սահակ քահանա Սահակյանը:

ԽԱՉՎԵՐԱՑ

ԽԱՉԵՐԹ՝ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Սեպտեմբերի 10-ին՝ Սուրբ Խաչի տոնի նախորդող օրը՝ նավակատիքին, Ներքին Չարբախի Սուրբ Խաչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Հրաչյա քահանա Գյոզալյանի նախաձեռությամբ Ներքին Չարբախ և Շենգավիթ համայնքների հավատավոր ժողովուրդը մասնակցություն ունեցավ տոնական խաչերթի:

Տեր հայրը, մինչ խաչերթի մեկնարկը, հավատացյալներին ներկայացրեց խաչերթի կարևորությունը և խորհուրդը: Խաչերթը մեկնարկեց Ներքին Շենգավիթի Սուրբ Խաչ մատուռից շարժվելով դեպի Ներքին Չարբախի Սուրբ Խաչ եկեղեցի: Երթի ընթացքում խաչերն իրենց ձեռքերում տանում էին զինվորները:

«ԵՎ ԱՍՏՎԱԾ ԽՈՍԵՑ ՀԱՅԵՐԵՆ»

Հոկտեմբերի 9-ին, Արարատյան Հայրապետական թեմի Սուրբ Սարգիս եկեղեցուն կից գործող կիրակնօրյա դպրոցի աշակերտները թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ և Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանի նախաձեռնությամբ առաջնորդարանի դահլիճում ներկայացրեցին Թարգմանչաց տոնին նվիրված միջոցառում:

ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

նոյեմբերի 13-ին, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցավ առաջին բուժօգնության դասընթաց՝ «Նախաբժշկական օգնություն» խորագրով: Այն կազակերպվել էր «ՄԻԱՍԻՆ» կրթամշակութային, սոցիալական, հոգևոր-դաստիարակչական համահայկական հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի նպատակն էր՝ հասարակությանը սովորեցնել առաջին բուժօգնության հիմունքները:

Դասընթացը մեկնարկեց Տերունական աղոթքով: Ապա ԱՀԹ Երիտասարդաց միությունների համակարգող և Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանը հանդես եկավ օրհնության խոսքով:

ԱՀԹ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐ

Դեկտեմբեր 3-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ ու թեմի Քրիստոնեական դաստիարակչության կենտրոնի նախաձեռնությամբ ԱՀԹ կիրակնօրյա դպրոցի սաները առաջնորդարանի դահլիճում հանդես եկան միջոցառմամբ՝ նվիրված Ս. Թադեոս ու Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնին:

Թեմում գործում է 21 կիրակնօրյա դպրոց, ուր հաճախում են 600-ից ավելի երեխաներ:

Ս. ՀԱԿՈԲ ՄԾԲՆԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՈՆ

Դեկտեմբերի 17-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի, Մարուգե ճգնավորի և Մելիտոս եպիսկոպոսի տոնը:

Տոնի օրը՝ վաղ առավոտյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Քանաքեռի Սուրբ Հակոբ եկեղեցի բերվեց Սուրբ Հակոբի մասունքը: Հավատացյալները Խաչերթով, Քանաքեռի Սուրբ Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Շմավոն քահանա Ղևոնդյանի առաջնորդությամբ, շարականների ուղեկցությամբ, Սուրբ մասունքը բերեցին եկեղեցի:

Այնուհետև մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ՝ Մայր Աթոռի կաթողիկոսական գրասենյակի գործավար Տեր Ադամ ավագ քահանա Մակարյանի ձեռամբ:

Սուրբ և Անմահ Պատարագի ավարտին սուրբ մասունքով կատարվեց օրհնության կարգ:

ՃԱՆԱՉԻՐ ԻՆՁ, ԵՐԻՏԱՍԱՐԴ

Դեկտեմբերի 18-ին, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանի դահլիճում ՀԵՀԵՄ հոգևոր տեսուչ, Կենտրոնական գրասենյակի տնօրեն Հայր Թովմա վարդապետ Խաչատրյանի նախաձեռնությամբ, կայացավ ՀԵՀԵՄ «Ճանաչիր Ինձ, երիտասարդ» աստվածաշնչյան դասընթացը: Մասնակիցները թեմի երիտասարդներն էին:

Ծրագրի իրագործումը սկսվեց Արարատյան Հայրապետական թեմից, որը կկրի շարունակական բնույթ և կիրականացվի բոլոր թեմերում:

ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Դեկտեմբերի 23-ին, Արարատյան Հայրապետական թեմի Էրեբունի համայնքում տեղի ունեցավ ամանորյա միջոցառում:

Միջոցառումը սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո Կիրակնօրյա դպրոցի երեխաները հանդես եկան տոնական կատարումներով, իսկ բակում ցուցադրված էին սաների նկարչական աշխատանքները՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան թեմայով:

Միջոցառման ավարտին երեխաներին հյուր եկան Ձմեռ պապն ու Ձյունանուշը, ովքեր իրենց հետ բերել էին նվերներ՝ հոգևոր խաղեր՝ միջոցառման բոլոր մասնակիցներին:

ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Դեկտեմբերի 25-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանի դահլիճում առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Ամանորյա միջոցառում:

Միջոցառումը պատրաստել էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցու Կիրակնօրյա դպրոցի սաները:

Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանը միջոցառումը սկսեց Տերունական աղոթքով: Ապա Կիրակնօրյայի սաները ներկայացրին իրենց պատրաստած տոնական համարները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԱՀԹ եկեղեցիները համայնքի ներկայացուցիչների, երիտասարդաց միությունների և եկեղեցական ծխական խորհուրդների աջակցությամբ իրականացրել են ընդհանուր առմամբ 61.963. 000 (վաթսունմեկ միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամի չափով սոցիալական ծրագրեր, որոնցից.

Ըստ աջակցության տեսակների՝

Բնաիրային աջակցություն 10.081.000 ՀՀԴ
Դրամական աջակցություն 51.882.000 ՀՀԴ

Ըստ շահառուների՝

Անհատներ (քանակ) 2718
Ընտանիքներ (քանակ) 876

Մասնավորապես՝
Բնաիրային աջակցություն 10.081.000 ՀՀԴ

Անհատներ (քանակ) 1751
Ընտանիքներ (քանակ) 418

Դրամական աջակցություն 51.882.000 ՀՀԴ

Անհատներ (քանակ) 967
Ընտանիքներ (քանակ) 514

Ս. ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ Ս. ՊՍԱԿ

Հաշվետու ժամանակահատվածում ԱՀԹ Երևանի եկեղեցիներում կատարվել է.

2126 պսակ
8131 մկրտություն

www.araratian-tem.am; www.qahana.am